պարտ է լինիլ սպասաւոր Հայոց այսինքն, ով ոք 'ի ձէնջ եղիցի մեծ նա է սպասաւոր կըրտսեր պաշտօնատար ծառայելոյ ամենեցուն, սա լիցի բերան ազգին Հայոց և առաջնասցէ 'ի գործ պաշտօնի որում աւանդ է նմայ տունն Հայոց 'ի ծերակուտէ իւրմէ ըստ Օրինօք, և սա ևս ընդունեսցի պտուղ գործոյն ձեռաց իւրոց ըստ Օրինաց, որպէս ես և դու ընթերցողդ, և սա ոչ կարէ ոչ ոք իրօք առաւելանալ քանթէ մի 'ի փոքրկանց Հայոց, առաւելութիւնն սորայ ոչ ոք իրօք բայց 'ի հաւատարմաբար ծառայութեամբ պաշտօնիւ վասն ազգին իւրոյ, սա լինիցի սիրելի պատուելի մեզ վասն հաւատարմաբար ծառայութեան իւրոյ, և սա կացցէ և մնասցէ աներկիւղ բոլոր ժամանակ պաշտօնատարութեան իւրոյ և առանց ապաստանութեան յումեքէ քանզի ոչ ունի կարողութիւն մազ մի 'ի գլխոյ ոչ ոք յումեքէ յինքն ըստ կամաւ իւրով բառնալ թէ ոչ ըստ Օրինօք վարձս գործոց ձեռաց գործողաց սա տացէ եթէ պատիւ եթէ պատիժ ըստ համեմատութեան վճռոյ դատաստանի մերոյ ըստ Օրինօք։

Նաև ցուցից ձեզ նշաւակ մի որում կարէք տեսանել աչօք ձերովք որ Օրէնք և սահման անխախտելի 'ի մէջ ամենայն գործոյ առաւել արժէ քանց ակունս պատուականս և քան զօրութիւն բազկաց քաջամարտից և քան զգանձս բազումս, և զօրութիւն բազում 'ի սմանէ ելանէ,